L.A. Care Medicare Plus™ (HMO D-SNP)

# Նպաստների ամփոփում

2023

# L.A. Care Medicare Plus (HMO- SNP)-ի հետ կապված փոփոխություններ 2023 թ. Անդամի տեղեկագիրք, Փոփոխությունների ամենամյա ծանուցում և Նպաստների ամփոփում

Հարգելի Անդամ,

**Սա կարևոր տեղեկություն է Ձեր L.A. Care Cal MediConnect Plan-ի ապահովագրական փոփոխությունների վերաբերյալ:**

Փոփոխություններ են կատարվել Ձեր 2023 թ. L.A. Care Medicare Plus (HMO D-SNP)-ի Անդամի տեղեկագրքի, Փոփոխությունների ամենամյա ծանուցման և Նպաստների ամփոփման հետ կապված: Թարմացումները կատարվել են 2022 թ. Գնաճի նվազեցման օրենքի (Inflation Reduction Act) պատճառով: Ստորև կգտնեք տեղեկություն, որը նկարագրում է թարմացումները: Խնդրում ենք այս տեղեկությունը պահել որպես հղման միջոց: Թարմացված նյութերը կարող եք գտնել մեր կայքում՝ medicare.lacare.org:

Դուք կարիք չունեք դիմելու որևէ քայլի՝ որպես պատասխան այս փաստաթղթի, բայց մենք հանձնարարում ենք, որ այս տեղեկությունը պահեք ապագա հղումների համար: Որևէ հարց ունենալու դեպքում խնդրում ենք մեզ զանգահարել 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:

**Ձեր Անդամի տեղեկագրքի, Փոփոխությունների ամենամյա ծանուցման և Նպաստների ամփոփման հետ կապված փոփոխություններ**

ML2915 0223_AR

| **Որտեղ կարող եք գտնել Ձեր Անդամի տեղեկագրքի, Փոփոխությունների ամենամյա ծանուցման և Նպաստների ամփոփման հետ կապված փոփոխությունները** | **Նախնական տեղեկություն** | **Թարմացված տեղեկություն** |
|---|---|---|
| **Անդամի տեղեկագիրք**՝ 4-րդ Գլուխ «Դ. Բաժին. Մեր ծրագրի նպաստների տախտակ՝ Medicare-ի B Մասի դեղատոմսային դեղերի» ներքո | Ինչ որ Դուք պետք է վճարեք՝<br>^ Դուք վճարում եք $0 համավճար կամ 20% համաապահովագրություն յուրաքանչյուր Medicare-ով ապահովագրված ծառայության համար:<br><br>^Նայած Ձեր Medi-Cal-ի իրավասության | Ինչ որ Դուք պետք է վճարեք՝<br>^ Դուք վճարում եք $0 համավճար կամ 20% համաապահովագրություն յուրաքանչյուր Medicare-ով ապահովագրված ծառայության համար♦:<br><br>**♦Սկսած ապրիլի 1, 2023 թվից, թերևս վճարեք ավելի ցածր համաապահովագրություն B Մասի դեղերի համար, եթե դեղի գինը բարձրացել է ավելի արագ, քան գնաճի ցուցանիշը հենանիշային եռամսյակում: Սկսած հուլիսի 1, 2023 թվից, Դուք չեք վճարի ավելի քան $35 ինսուլինի միամսյա պաշարի համար, որը ապահովագրված է Medicare-ի B Մասի դեղատոմսային դեղերի ներքո, նույնիսկ եթե չեք վճարել Ձեր հանելին:**<br><br>^Նայած Ձեր Medi-Cal-ի իրավասության |

| **Որտեղ կարող եք գտնել Ձեր Անդամի տեղեկագրքի, Փոփոխությունների ամենամյա ծանուցման և Նպաստների ամփոփման հետ կապված փոփոխությունները** | **Նախնական տեղեկություն** | **Թարմացված տեղեկություն** |
| --- | --- | --- |
| **Փոփոխությունների ամենամյա ծանուցում՝** «Ե. Բաժին. Հաջորդ տարվա նպաստների և ծախքերի փոփոխություններ - Medicare-ով ապահովագրված նպաստների տախտակ» | 2023 թ. (հաջորդ տարվա) սյունակ<br>Medicare-ի B Մասի դեղատոմսային դեղեր<br><br>Դուք վճարում եք 0 - 20% համաապահովագրային գումար: Ձեր համաապահովագրության գումարը կախված է Ձեր ստացած Medi-Cal նպաստների տեսակից: | 2023 թ. (հաջորդ տարվա) սյունակ<br>Medicare-ի B Մասի դեղատոմսային դեղեր♦<br><br>Դուք վճարում եք 0 - 20% համաապահովագրային գումար♦: Ձեր համաապահովագրության գումարը կախված է Ձեր ստացած Medi-Cal նպաստների տեսակից:<br><br>**♦Սկսած ապրիլի 1, 2023 թվից, թերևս վճարեք ավելի ցածր համաապահովագրություն B Մասի դեղերի համար, եթե դեղի գինը բարձրացել է ավելի արագ, քան գնաճի ցուցանիշը հենանիշային եռամսյակում: Սկսած հուլիսի 1, 2023 թվից, Դուք չեք վճարի ավելի քան $35 ինսուլինի միամսյա պաշարի համար, որը ապահովագրված է Medicare-ի B Մասի դեղատոմսային դեղերի ներքո, նույնիսկ եթե չեք վճարել Ձեր հանելին:** |
| **Նպաստների ամփոփում՝** «Գ. Բաժին. Ապահովագրված ծառայությունների ցուցակ Medicare-ի B Մասի դեղատոմսային դեղեր» | B Մասի դեղերն ընդգրկում են դեղեր, որոնք բժիշկը Ձեզ է տալիս իր գրասենյակում, մի շարք բերանով ընդունվող քաղցկեղի դեղեր, և մի շարք դեղեր, որոնք օգտագործվում են որոշակի բժշկական սարքերի հետ: Այս դեղերի մասին հավելյալ | B Մասի դեղերն ընդգրկում են դեղեր, որոնք բժիշկը Ձեզ է տալիս իր գրասենյակում, մի շարք բերանով ընդունվող քաղցկեղի դեղեր, և մի շարք դեղեր, որոնք օգտագործվում են որոշակի բժշկական սարքերի հետ: Այս դեղերի մասին հավելյալ տեղեկության համար ընթերցեք **Անդամի տեղեկագիրքը:**<br><br>**Սկսած ապրիլի 1, 2023 թվից, թերևս վճարեք ավելի ցածր համաապահովագրություն B Մասի դեղերի** |

| | | |
|---|---|---|
| | տեղեկության համար ընթերցեք Ապահովագրության ապացույցը: Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br><br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները: | **համար, եթե դեղի գինը բարձրացել է ավելի արագ, քան գնաճի ցուցանիշը հենանիշային եռամսյակում: Սկսած հուլիսի 1, 2023 թվից, Դուք չեք վճարի ավելի քան $35 ինսուլինի միամսյա պաշարի համար, որը ապահովագրված է Medicare-ի B Մասի դեղատոմսային դեղերի ներքո, նույնիսկ եթե չեք վճարել Ձեր հանելին:**<br><br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները: |

# L.A. Care Medicare Plus (HMO D-SNP) | 2023 թ Նպաստների ամփոփում

## Ներածություն

Այս փաստաթուղթը L.A. Care Medicare Plus ծրագրի կողմից տրամադրվող նպաստների և ծառայությունների հակիրճ ամփոփումն է: Այն ներառում է հաճախակի տրվող հարցերի պատասխաններ, կարևոր կոնտակտային տվյալներ, մատուցվող նպաստների և ծառայությունների ակնարկ և տեղեկություն Ձեր իրավունքների վերաբերյալ՝ որպես L.A. Care Medicare Plus-ի անդամ: Հիմնական տերմինները և դրանց սահմանումները այբբենական կարգով հայտնվում են *Ապահովագրման ապացույցի* վերջին գլխում:

## Բովանդակություն


A. Հրաժարում պատասխանատվությունից ........ 2

B. Հաճախակի տրվող հարցեր (FAQ) ........ 4

C. Ապահովագրվող ծառայությունների ցանկը ........ 9

D. L.A. Care Medicare Plus-ից դուրս ապահովագրվող նպաստներ ........ 31

E. Ծառայություններ, որոնք ապահովագրված չեն L.A. Care Medicare Plus ծրագրի, Medicare-ի և Medi-Cal-ի կողմից ........ 32

F. Որպես պլանի անդամ Ձեր իրավունքները ........ 32

G Ինչպես գանգատ ներկայացնել կամ մերժված ծառայությունը բողոքարկել ........ 35

H. Ինչ անել խարդախության կասկած ունենալու դեպքում ........ 36

## A. Հրաժարում պատասխանատվությունից

Սա L.A. Care Medicare Plus-ի կողմից ապահովագրված առողջական ծառայությունների ամփոփումն է 2023թ.-ի համար: Սա միայն ամփոփագիր է: Նպաստների ամբողջական ցանկին ծանոթանալու համար կարդացեք *Ապահովագրման ապացույցը*: 2023թ.-ի Ապահովագրման ապացույցը / Անդամների ձեռնարկը հասանելի կլինի մինչև 2022 թ-ի հոկտեմբերի 15-ը: 2023թ.-ի Անդամների ձեռնարկի արդի պատճենը հասանելի է մեր կայքում՝ medicare.lacare.org: Կարող եք նաև զանգահարել անդամների սպասարկման հեռախոսահամարով՝ 1-833-522-3767 (TTY՝ 711), օրական 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը՝ 2023 թ-ի Ապահովագրման ապացույցը / Անդամների ձեռնարկը ձեզ ուղարկելու խնդրանքով:

- L.A. Care Medicare Plus-ը (HMO D-SNP) առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր է կնքել և Medicare-ի, և Medi-Cal-ի հետ՝ երկու ծրագրերի նպաստներն անդամագրված անձանց տրամադրելու համար: L.A. Care Medicare Plus-ի անդամագրումը կախված է պայմանագրի թարմացումից:
- Սա ամբողջական ցանկ չէ: Նպաստների մասին տեղեկատվությունը կարճ ամփոփում է, այլ ոչ թե նպաստների ամբողջական նկարագրություն: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ծրագրին կամ կարդացեք L.A. Care Medicare Plus ծրագրի անդամների ձեռնարկը:
- ATTENTION: If you speak *English*, language assistance services, free of charge, are available to you. Call **1-833-522-3767** (TTY: **711**), 24 hours a day, 7 days a week, including holidays. The call is free.
- ATENCIÓN: Si usted habla español, los servicios de asistencia con el idioma estarán disponibles para usted sin costo. Llame al **1-833-522-3767** (TTY: **711**), las 24 horas del día, los 7 días de la semana, incluso los días festivos. La llamada es gratuita.
- ध्यान दें: अगर आप हिंदी बोलते हैं, तो मुफ्त में भाषा सहायता सेवाएं, आपके लिए उपलब्ध हैं। अवकाश के दिनों समेत, दिन के 24 घंटे, सप्ताह के 7 दिन **1-833-522-3767** (TTY: **711**) पर कॉल करें। कॉल नि:शुल्क है।
- LUS TSHAJ TAWM: Yog koj hais lus Hmoob, muaj kev pab txhais lus pub dawb rau koj, hu rau **1-833-522-3767** (TTY: **711**), 24 teev hauv ib hnub, 7 hnub hauv ib asthiv, suav nrog cov hnub so tib si. Qhov hu no yog hu dawb xwb.
- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.Եթե խոսում եք հայերեն, լեզվական աջակցության ծառայությունները հասանելի են Ձեզ անվճար: Զանգահարեք **1-833-522-3767** հեռախոսահամարով (TTY՝ **711**), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: Հեռախոսազանգն անվճար է:
- ចំណាំ: បើអ្នកនិយាយភាសា ខ្មែរ, សេវាជំនួយផ្នែកភាសា គ្មានបង់ថ្លៃ គឺមានសម្រាប់ជួយអ្នក។ សូមទូរស័ព្ទទៅ **1-833-522-3767** (TTY: **711**), 24 ម៉ោងក្នុងមួយថ្ងៃ 7 ថ្ងៃក្នុងមួយសប្តាហ៍រួមទាំងថ្ងៃឈប់សម្រាក។ ការហៅទូរស័ព្ទនេះគឺមិនគិតថ្លៃទេ។
- 안내: 한국어를 사용하실 경우 언어지원서비스를 무료로 이용하실 수 있습니다. 연중무휴로 이용할 수 있는 **1-833-522-3767** (TTY: **711**) 번으로 전화하십시오. 통화료는 무료입니다.
- ਧਿਆਨ ਦਿਓ: ਜੇ ਤੁਸੀਂ ਪੰਜਾਬੀ ਬੋਲਦੇ ਹੋ, ਤਾਂ ਤੁਹਾਡੇ ਲਈ ਮੁਫਤ ਭਾਸ਼ਾ ਸਹਾਇਤਾ ਸੇਵਾਵਾਂ ਉਪਲਬਧ ਹਨ। ਛੁੱਟੀ ਵਾਲੇ ਦਿਨਾਂ ਸਮੇਤ 24 ਘੰਟੇ, 7 ਦਿਨ **1-833-522-3767** (TTY: **711**) 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ।ਕਾਲ ਮੁਫਤ ਹੈ

- ໂປດຊາບ: ຖ້າວ່າ ທ່ານເວົ້າພາສາລາວ, ມີບໍລິການຊ່ວຍເຫຼືອດ້ານພາສາ,ໃຫ້ທ່ານໂດຍບໍ່ເສັຽຄ່າ. ໂທຣ **1-833-522-3767** (TTY: **711**), ໄດ້ຕະຫຼອດ 24 ຊົ່ວໂມງ, 7 ວັນຕໍ່ອາທິດ, ລວມເຖິງ ວັນພັກຕ່າງໆ. ເບີໂທຣນີ້ແມ່ນບໍ່ເສັຽຄ່າ.
- ВНИМАНИЕ! Если вы говорите по-русски, вы можете воспользоваться бесплатными услугами переводчика. Звоните по телефону **1-833-522-3767** (TTY: **711**), круглосуточно, без выходных, включая праздничные дни. Звонок бесплатный.
- โปรดทราบ: หากท่านพูดภาษาไทย เรามีบริการช่วยเหลือด้านภาษาให้คุณโดยไม่เสียค่าใช้จ่าย โปรดโทรฟรีที่หมายเลข **1-833-522-3767** (TTY: **711**) ได้ตลอด 24 ชั่วโมง ทุกวัน ไม่เว้นวันหยุด
- PAUNAWA: Kung nagsasalita ka ng Tagalog, magagamit mo ang mga serbisyo ng tulong sa wika nang walang bayad. Tumawag sa **1-833-522-3767** (TTY: **711**), 24 na oras sa isang araw, 7 araw sa isang linggo, kabilang ang mga piyesta opisyal. Libre ang pagtawag.
- CHÚ Ý: Nếu quý vị nói Tiếng Việt, hiện có các dịch vụ hỗ trợ ngôn ngữ miễn phí cho quý vị. Gọi **1-833-522-3767** (TTY: **711**), 24 giờ một ngày, 7 ngày một tuần, kể cả các ngày lễ. Cuộc gọi là miễn phí.
- 注意：如果您說中文，您可免費獲得語言協助服務。請致電 **1-833-522-3767** （TTY：**711**），服務時間為每週 7 天，每天 24 小時（包含假日）。這是免費電話。
- عناية: إذا كنت تتحدث اللغة العربية، فإن خدمات المساعدة اللغوية، متوفرة لك، مجاناً. اتصل على **1-833-522-3767** (TTY: **711**) ، ٢٤ ساعة في اليوم و٧ أيام في الأسبوع، بما في ذلك أيام العطلات. هذه المكالمة مجانية.
- ت وجه: اگر به زبان فارسی صحبت می کنید، خدمات کمک در زمینه زبان بطور رایگان در اختیار شما قرار دارد. می توانید در تمام ۲۴ ساعت شبانه روز و ۷ روز هفته، حتی روزهای تعطیل با **1-833-522-3767** (TTY: **711**) تماس بگیرید. تماس رایگان می باشد.
- **Medicare**-ի մասին մանրամասն տեղեկությունների համար ծանոթացեք Medicare-ի և ձեր ձեռնարկին: Այն պարունակում է Medicare-ի նպաստների, իրավունքների և պաշտպանությունների ամփոփում, ինչպես նաև Medicare-ի վերաբերյալ հաճախակի տրվող հարցերի պատասխանները: Կարող եք այն ստանալ Medicare-ի կայքից (www.medicare.gov) կամ զանգահարելով 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: Medi-Cal-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք ծանոթանալ Առողջապահական ծառայությունների Կալիֆոռնիայի բաժանմունքի (DHCS) կայքին (www.dhcs.ca.gov) կամ դիմել **Medi-Cal**-ի Օմբուդսմենի գրասենյակ1-888-452-8609, երկուշաբթիից ուրբաթ, ժ. 8:00-ից 17:00: Այն անձինք, ովքեր ունեն և Medicare, և Medi-Cal, կարող են դիմել հատուկ Օմբուդսմենին հետևյալ հեռախոսահամարով՝ 1-855-501-3077, երկուշաբթիից ուրբաթ, ժ. 9:00-ից 17:00:
- Այս փաստաթուղթը կարող եք անվճար ստանալ այլ ձևաչափերով, օրինակ՝ խոշոր տառատեսակով, բրեյլով կամ ձայնագրությամբ: Զանգահարեք 1-833-522-3767 հեռախոսահամարով (TTY՝ 711, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: Զանգն անվճար է:
- Եթե այժմ և ապագայում ցանկանում եք ստանալ այս նյութերն անգլերենից բացի մեկ այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով, զանգահարեք Անդամների սպասարկում՝ **1-833-522-3767** (TTY՝ **711**) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: Զանգն անվճար է: Դուք կարող եք մեզ խնդրել, որ ձեզ միշտ տեղեկատվություն ուղարկենք ձեզ հարմար լեզվով կամ ձևաչափով: Դա կոչվում է մշտական հայց: Մենք կհետևենք ձեր մշտական հայցին, որպեսզի ամեն անգամ ձեզ տեղեկատվություն ուղարկելիս կարիք չունենաք առանձին հայցեր ներկայացնել: Այս փաստաթուղթը անգլերենից բացի այլ լեզվով և/կամ այլ ձևաչափով ստանալու համար դիմեք Անդամների սպասարկման բաժին՝ **1-833-522-3767**, TTY՝ **711** հեռախոսահամարով՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: Ներկայացուցիչը կարող է օգնել ձեզ ներկայացնել մշտական հայց կամ փոխել այն:

## B. Հաճախակի տրվող հարցեր (FAQ)

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված են հաճախակի տրվող հարցերը:

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Ի՞նչ է Medicare-Medi-Cal Coordination ծրագիրը:** | Medicare-Medi-Cal Coordination ծրագիրը առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր է կնքել և Medicare-ի, և Medi-Cal-ի հետ՝ երկու ծրագրերի նպաստներն անդամագրված անձանց տրամադրելու համար: Այն նախատեսված է 65 և ավելի բարձր տարիքի մարդկանց համար: Medicare-Medi-Cal Coordination ծրագիրը մի կազմակերպություն է, որ բաղկացած է բժիշկներից, հիվանդանոցներից, դեղատներից, Կառավարվող երկարաժամկետ ծառայություններից և աջակցություններից (MLTSS) և այլ մատակարարներից: Այստեղ նաև կան խնամքի համակարգողներ, որպեսզի օգնեն Ձեզ կարգավորելու բոլոր Ձեր մատակարարներին և ծառայությունները և աջակցությունները: Նրանք բոլորն աշխատում են միասին ձեզ անհրաժեշտ խնամքը տրամադրելու համար: |
| **Արդյո՞ք ես կստանամ նույն Medicare-ի և Medi-Cal-ի նպաստները L.A. Care Medicare Plus ծրագրում, որը ես հիմա ստանում եմ:** | Դուք կստանաք Ձեր Medicare-ի և Medi-Cal-ի նպաստների մեծ մասը L.A. Care Medicare Plus-ից: Դուք աշխատելու եք մատակարարների թիմի հետ, որոնք կօգնեն Ձեզ որոշել, թե որ ծառայությունները լավագույնս կծառայեն Ձեր կարիքներին: Սա նշանակում է, որ որոշ ծառայություններ, որոնք դուք այժմ ստանում եք, կարող են փոխվել՝ ելնելով ձեր կարիքներից, և ձեր բժշկի և խնամքի թիմի գնահատումներից: Դուք կարող եք նաև ստանալ այլ նպաստներ ձեր առողջապահական ծրագրից դուրս, ինչպես հիմա եք ստանում, անմիջապես նահանգի կամ վարչաշրջանի գործակալությունից, ինչպես օրինակ՝ Տնային աջակցության ծառայությունները (IHSS), հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման խանգարումների մասնագիտացված ծառայությունները կամ տարածաշրջանային կենտրոնի ծառայությունները:<br><br>L.A. Care Medicare Plus ծրագրին անդամագրվելուց հետո Դուք և Ձեր խնամքի թիմը համատեղ աշխատելու եք Ձեր անձնական նախասիրությունները և նպատակներն արտացոլող Անհատականացված խնամքի ծրագիր մշակելու ուղղությամբ՝ Ձեր առողջության և աջակցության կարիքները հոգալու համար:<br><br>Եթե դուք օգտագործում եք Medicare Մաս D-ի դեղատոմսով որևէ դեղամիջոց, որը LA Care Medicare Plus-ը սովորաբար չի ներառում, կարող եք ժամանակավոր մատակարարում ստանալ, և մենք կօգնենք ձեզ անցնել այլ դեղամիջոցների կամ հնարավորություն ստանալ դեղը ձեռք բերելու LA Care Medicare Plus ծրագրի միջոցներով, եթե այն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների սպասարկում՝ 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: |

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Կարո՞ղ եմ դիմել այն նույն բժիշկներին, որոնց դիմում եմ այժմ:** | Շատ հաճախ, հենց այդպես էլ կա: Եթե Ձեր մատակարարներն (այդ թվում բժիշկները, հիվանդանոցները, թերապևտները, դեղատները և այլ առողջապահական խնամք տրամադրողները) աշխատում են L.A. Care Medicare Plus-ի հետ և պայմանագիր ունեն մեզ հետ, Դուք կարող եք շարունակել այցելել նրանց:<br>• Այն մատակարարները, որոնք պայմանագիր ունեն մեզ հետ, «ցանցային» են: Ցանցի մատակարարները մասնակցում են մեր ծրագրին: Դա նշանակում է, որ նրանք ընդունում են մեր ծրագրի անդամներին և մատուցում են ծառայություններ, որոնք ապահովագրվում են մեր ծրագրի կողմից:**Դուք պետք է օգտվեք L.A. Care Medicare Plus ծրագրի ցանցի մատակարարների ծառայություններից:** Եթե դուք օգտվում եք մեր ցանցի մեջ չմտնող մատակարարներից կամ դեղատներից, ծրագիրը կարող է չվճարել այս ծառայությունների կամ դեղերի համար:<br>• Եթե Ձեզ հարկավոր են հրատապ կամ շտապ օգնության կամ տարածքից դուրս գտնվող դիալիզի ծառայություններ, կարող եք դիմել L.A. Care Medicare Plus ծրագրի արտացանցային մատակարարների:<br>• Եթե դուք ներկայումս բուժում եք ստանում մի մատակարարի մոտ, որը L.A. Care Medicare Plus-ի ցանցի մեջ չի մտնում, կամ հաստատված հարաբերություններ ունեք մի մատակարարի հետ, որը չի մտնում L.A. Care Medicare Plus-ի ցանցի մեջ, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ տեղեկանալու կապը պահպանելու հնարավորության մասին:<br>• Եթե այն բժիշկները, որոնց դուք ներկայումս այցելում եք, L.A. Care-ի մատակարարների ցանցի մաս չեն կազմում, ապա կարող եք հնարավորություն ստանալ սահմանափակ ժամանակով պահպանել ձեր բժշկին կամ հիվանդանոցը, որը կոչվում է Խնամքի շարունակում:<br>Խնամքի շարունակման (COC) իրավունք ստանալու համար.<br>  ○ Դուք պետք է այցելած լինեք առաջնային խնամքի բժշկին (PCP) և/կամ մասնագետին առնվազն մեկ անգամ վերջին 12 ամսվա ընթացքում և PCP-ի կամ մասնագետի հետ առաջիկա ժամադրություն ունենաք գալիք 12 ամսվա ընթացքում:<br>  ○ Ձեր մատակարարը պետք է ցանկանա ընդունել L.A. Care Health Plan-ի սակագները և պայմանագիր կնքի համապատասխան բժշկական խմբի/բժիշկների անկախ ասոցիացիայի (Independent Physician Association, IPA) հետ:<br>  ○ Մատակարարը չպետք է ունենա խնամքի որակի որևէ փաստագրված խնդիր, որը կստիպի L.A. Care-ին կամ PPG-ին բացառել մատակարարին իր ցանցից:<br>Խնամքի շարունակման յուրաքանչյուր հարցում պետք է կատարվի հետևյալ ժամկետներում.<br>  ○ L.A. Care-ի կամ PPG-ի կողմից հարցումը ստանալու օրվանից երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում,<br>  ○ Տասնհինգ (15) օրացուցային օրվա ընթացքում, եթե անդամի առողջական վիճակը պահանջում է ավելի անհապաղ ուշադրություն, օրինակ՝ առաջիկա հանդիպումներ կամ խնամքի այլ հրատապ կարիքները, կամ<br>  ○ Երեք (3) օրացուցային օրվա ընթացքում, եթե անդամի առողջությանը վնաս հասցնելու ռիսկ կա<br>• Պարզելու համար, թե արդյոք ձեր բժիշկները ծրագրի ցանցում են, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին 1-833-522-3767 (TTY՝ 711) հեռախոսահամարով՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը, կամ ծանոթացեք L.A. Care Medicare Plus-ի *Մատակարարների և դեղատների հասցեագրքին*, որը գտնվում է ծրագրի կայքում՝ medicare.lacare.org:<br>Եթե L.A. Care Medicare Plus-ը նոր է Ձեր համար, մենք Ձեզ հետ համատեղ կաշխատենք Ձեր Անհատականացված խնամքի ծրագիրը մշակելու ուղղությամբ՝ Ձեր կարիքները հոգալու համար: |

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Ի՞նչ է L.A. Care Medicare Plus ծրագրի խնամքի կառավարիչը:** | L.A. Care Medicare Plus ծրագրի խնամքի կառավարիչը այն գլխավոր անձն է, որի հետ կապ եք հաստատում: Այս անձն օգնում է ձեզ տնօրինել ձեր բոլոր մատակարարներին և ծառայությունները, և վստահեցնում է, որ ստանում եք այն, ինչ ձեզ անհրաժեշտ է: |
| **Ի՞նչ են կառավարվող երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունները (Managed Long-Term Services and Supports, MLTSS):** | Երկարատև ծառայությունները և աջակցությունն օգնություն է այն մարդկանց, ում օգնություն է հարկավոր առօրյա գործերը կատարելու համար, ինչպիսիք են օրինակ՝ լողանալը, շպարվելը, հագնվելը, ճաշ պատրաստելը և դեղ խմելը: Այս ծառայությունների մեծ մասը տրամադրվում է տան պայմաններում կամ Ձեր համայնքում, սակայն կարող են տրամադրվել նաև ծերանոցում կամ հիվանդանոցում: Որոշ դեպքերում վարչաշրջանը կամ այլ գործակալություն կարող են վերահսկել այս ծառայությունները, և ձեր խնամքի համակարգողը կամ խնամքի թիմը կաշխատի այդ գործակալության հետ: |
| **Ի՞նչ է Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիրը (Multipurpose Senior Services Program, MSSP):** | MSSP-ն ապահովում է ընթացիկ խնամքի համակարգումը առողջապահական ծառայություններ մատուցողների հետ՝ ձեր առողջապահական ծրագրից ավելին, և կարող է կապել ձեզ այլ անհրաժեշտ համայնքային ծառայությունների և ռեսուրսների հետ: Այս ծրագիրը օգնում է ձեզ ստանալ ծառայություններ, որոնք օգնում են ձեզ ինքնուրույն ապրել ձեր տանը: |
| **Ի՞նչ կլինի, եթե ես ծառայության կարիք ունենամ, բայց L.A. Care Medicare Plus ծրագրի ցանցում ոչ ոք չի կարող դա մատուցել:** | Ծառայությունների մեծ մասը կտրամադրվի մեր ցանցի մատակարարների կողմից: Եթե Ձեզ հարկավոր են ծառայություններ, որոնք չեն կարող տրամադրվել մեր ցանցում, L.A. Care Medicare Plus-ը կվճարի արտացանցային մատակարարի համար: |
| **Որտե՞ղ է հասանելի L.A. Care Medicare Plus-ը:** | Այս ծրագրի սպասարկման տարածքը ներառում է. Լոս Անջելեսի վարչաշրջանը: Դուք պետք է ապրեք այս տարածքում՝ ծրագրին միանալու համար: |

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Ի՞նչ է նախօրոք լիազորումը:** | Նախօրոք լիազորում նշանակում է L.A. Care Medicare Plus-ի թույլտվություն՝ մեր ցանցից դուրս ծառայություններ փնտրելու կամ ծառայություններ ստանալու համար, որոնք սովորաբար չեն ապահովագրվում մեր ցանցի կողմից, **նախքան** ծառայությունները ստանալը: L.A. Care Medicare Plus-ը չի կարող ապահովագրել ծառայությունը, ընթացակարգը, ապրանքը կամ դեղը, եթե դուք նախօրոք լիազորում չեք ստացել:<br><br>**Եթե Ձեզ հարկավոր են հրատապ կամ շտապ օգնության կամ տարածքից դուրս դիալիզի ծառայություններ, կարիք չունեք նախօրոք լիազորում ստանալ**: L.A. Care Medicare Plus ծրագիրը Ձեզ կամ Ձեր մատակարարին կարող է տրամադրել ծառայությունների կամ ընթացակարգերի ցուցակը, որոնք Ձեզնից պահանջում են L.A. Care Care Medicare Plus ծրագրից նախօրոք լիազորում ստանալ նախքան ծառայության մատուցումը: Եթե հարցեր ունեք այն մասին, թե արդյոք պահանջվում է նախօրոք լիազորում հատուկ ծառայությունների, ընթացակարգերի, ապրանքների կամ դեղերի համար, զանգահարեք Անդամների սպասարկում՝ 1-833-522-3767 (TTY՝ 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: |
| **Ի՞նչ է ուղեգիրը:** | Ուղեգիրը նշանակում է, որ Ձեր առաջնային խնամքի մատակարարը (PCP) պարտավոր է Ձեզ վավերացում տալ, նախքան կարողանաք այցելել ոչ Ձեր PCP-ին: Ուղեգիրը տարբերվում է նախօրոք լիազորումից: Եթե դուք ուղեգիր չեք ստանում ձեր PCP-ից, L.A. Care Medicare Plus-ը կարող է չփոխհատուցել ծառայությունները: L.A. Care Medicare Plus-ը կարող է ձեզ տրամադրել ծառայությունների ցանկ, որոնց համար պահանջվում է ուղեգիր ձեր PCP-ից նախքան ծառայությունը տրամադրելը:<br><br>Ծանոթացեք *Ապահովագրման ապացույցին*՝ իմանալու համար, թե երբ պետք է ձեր PCP-ից ուղեգիր ստանաք: |
| **Արդյո՞ք պետք է վճարեմ ամսական գումար (որը կոչվում է նաև պրեմիում) L.A. Care Medicare Plus ծրագրի շրջանակներում:** | Ոչ: Քանի որ դուք ունեք Medi-Cal, դուք չեք վճարի ամսական հավելավճարներ, ներառյալ ձեր Medicare Մաս B-ի հավելավճարը, ձեր առողջական ապահովագրության համար: |
| **Արդյո՞ք պետք է վճարեմ հանելի գումար որպես L.A. Care Medicare Plus-ի անդամ:** | Ոչ: Դուք չեք վճարում հանելի գումար L.A. Care Medicare Plus ծրագրում: |

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Որքա՞ն է իմ գրպանից վճարվող առավելագույն գումարը, որը ես վճարելու եմ բժշկական ծառայությունների համար որպես L.A. Care Medicare Plus-ի անդամ:** | L.A. Care Medicare Plus-ում բժշկական ծառայությունների համար ծախսերի համօգտագործում չկա, ուստի ձեր գրպանից տարեկան գրպանից արվող ծախսերը կլինեն $0: |
| **Ի՞նչ կլինի, եթե ես կորցնեմ Medi-Cal-ի իրավասությունը:** | Եթե դուք գտնվում եք մեր ծրագրի 3-ամսյա ժամկետում, որը համարվում է շարունակական իրավասություն, մենք կշարունակենք տրամադրել Medicare Advantage ծրագրի կողմից ապահովագրվող Medicare-ի բոլոր նպաստները: Այնուամենայնիվ, այս ժամանակահատվածում մենք չենք շարունակի ապահովագրել Medicaid-ի նպաստները, որոնք ներառված են կիրառելի Medicaid Պետական ծրագրում, ինչպես նաև չենք վճարի Medicare-ի պրեմիում վճարները կամ ծախսերի համօգտագործումը, որոնց համար պետությունը այլապես պատասխանատու կլիներ, եթե դուք չկորցնեիք ձեր Medicaid-ի իրավասությունը: Ձեր կողմից վճարվող ծառայությունների արժեքը կարող է փոխվել: Լրացուցիչ տեղեկությունների համար անդրադարձեք Ապահովագրման ապացույցին / Անդամների ձեռնարկին: |

## C. Ապահովագրվող ծառայությունների ցանկը

Հետևյալ աղյուսակում հակիրճ ներկայացված է, թե որ ծառայությունները կարող են Ձեզ պետք գալ, դրանց գներն ու նպաստներին վերաբերող կանոնները:

| Առողջապահական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություններ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակարարների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ հիվանդանոցային խնամք է հարկավոր** | Հիվանդանոցում մնալը | $0 | Հիվանդանոցային ծառայությունները ապահովագրվում են, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են համարվում Ձեզ բուժող բժշկի և L.A. Care Medicare Plus ծրագրի կողմից: Չկան բժշկականորեն անհրաժեշտ ապահովագրված օրերի սահմանափակումներ հիվանդանոցում յուրաքանչյուր անգամ մնալու համար:<br>Բացառություն են կազմում շտապ օգնության դեպքերը, երբ Ձեր բժիշկը պետք է տեղյակ պահի ծրագրին, որ Դուք հոսպիտալացվելու եք: Դուք պետք է այցելեք ցանցի բժիշկներին, մասնագետներին կամ հիվանդանոցներ: Ցանցի հիվանդանոցների ոչ-արտակարգ իրավիճակի գործողությունների համար թերևս նախօրոք լիազորում և ուղեգիր պահանջվի: |
| | Բժշկի կամ վիրաբույժի խնամք | $0 | Բժշկի և վիրաբույժի խնամքը տրամադրվում է որպես հիվանդանոցում մնալու մաս: Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ և ուղեգրի պահանջներ: |
| | Ամբուլատոր հիվանդանոցի ծառայություններ, ներառյալ հետազոտում | $0 | Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ և ուղեգրի պահանջներ: |
| | Ամբուլատոր վիրաբուժական կենտրոնի (ASC) ծառայություններ | $0 | Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ և ուղեգրի պահանջներ: |

| Առողջապա-հական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություն-ներ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակար-արների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք ցանկանում եք բժշկի դիմել** | Վնասվածքի կամ հիվանդության բուժման նպատակով այցեր | $0 | Եթե Ձեզ հարկավոր են հրատապ կամ շտապ օգնության կամ տարածքից դուրս դիալիզի ծառայություններ, կարիք չունեք նախապես թույլտվություն ստանալ:<br>Դուք պետք է այցելեք ցանցի բժիշկներին, մասնագետներին կամ հիվանդանոցներ: |
| | Մասնագետի խնամք | $0 | Դուք պետք է այցելեք ցանցի բժիշկներին, մասնագետներին կամ հիվանդանոցներ:<br>Ցանցի հիվանդանոցների և մասնագետների համար նախօրոք լիազորում և ուղեգիր է պահանջվում: |
| | Բարեկեցության այցեր, ինչպես օրինակ՝ ֆիզիկական ստուգում | $0 | Բարեկեցության տարեկան այց յուրաքանչյուր 12 ամիսը մեկ: |
| | Աշխատեք չհիվանդանալ, օրինակ՝ սրսկվեք գրիպի դեմ և անցեք հետազոտություններ քաղցկեղի ստուգման համար | $0 | Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ և ուղեգրի պահանջներ: |

| Առողջապա-հական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություն-ներ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակար-արների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
| | Ասեղնաբուժություն | $0 | Ամիսը մեկ անգամ երկու այցի հնարավորություն: Հավելյալ այցերի թույլատվությունը հնարավոր է նախօրոք լիազորումով՝ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինելու դեպքում:<br><br>Medicare-ի կողմից վճարվող ասեղնաբուժության այցերի համար՝ մինչև 12 ասեղնաբուժության այց 90 օրվա ընթացքում, եթե մեջքի քրոնիկ ցավ ունեք: Հավելյալ 8 ասեղնաբուժական սեսիա մեջքի ստորին հատվածի ցավի համար՝ բարելավում ցույց տալու դեպքում: Դուք չեք կարող տարեկան 20-ից ավել ասեղնաբուժական բուժում ստանալ մեջքի ստորին հատվածի քրոնիկ ցավի համար ամեն տարի: Մեջքի ստորին հատվածի քրոնիկ ցավի համար ասեղնաբուժական բուժումները պետք է դադարեցվեն, եթե ձեզ մոտ բարելավում չի նկատվում, կամ ձեր վիճակը վատթարանում է: |
| | Բարի գալուստ Medicare (պրոֆիլակտիկ այց մեկ անգամ միայն) | $0 | Ձեր նոր B Մասի ապահովագրության առաջին 12 ամսվա ընթացքում Դուք կարող եք ստանալ կա՛մ «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այց, կա՛մ տարեկան բարեկեցության այց: Առաջին 12 ամսից հետո կարող եք Տարեկան բարեկեցության այց ստանալ յուրաքանչյուր 12 ամիսը մեկ: |

| Առողջապահական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություններ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակարարների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ շտապ օգնություն է անհրաժեշտ** | Շտապ օգնության կայանի ծառայություններ | $0 | Ապահովագրված շտապ օգնություն կարող եք ստանալ երբ էլ որ այն անհրաժեշտ լինի Ձեզ Միացյալ Նահանգների կամ իր տարածքում գտնվող որևէ վայրում առանց նախօրոք լիազորման կամ ուղեգրի:<br>Շտապ և հրատապ օգնության՝ Միացյալ Նահանգներից դուրս ստացված ծառայություններն ապահովագրվում են տարեկան մինչև $10,000 գումարով: |
| | Հրատապ խնամք | $0 | Դուք կարող եք ապահովագրված հրատապ խնամք ստանալ երբ էլ որ այն անհրաժեշտ լինի Ձեզ Միացյալ Նահանգների կամ իր տարածքում գտնվող որևէ վայրում առանց նախօրոք լիազորման կամ ուղեգրի:<br>Շտապ և հրատապ օգնության՝ Միացյալ Նահանգներից դուրս ստացված ծառայություններն ապահովագրվում են տարեկան մինչև $10,000 գումարով: |

| Առողջապահական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություններ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակարարների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք բժշկական ստուգումների կարիք ունեք** | Ախտորոշիչ ռադիոլոգիայի ծառայություններ (օրինակ՝ ռենտգենյան ճառագայթներ կամ այլ ճառագայթային ծառայություններ, ինչպիսիք են ՀՏ սկանավորումը կամ ՄՌՏ-ն) | $0 | Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ և ուղեգրի պահանջներ: |
| | Լաբորատոր անալիզներ և ախտորոշիչ ընթացակարգեր, ինչպիսիք են արյան անալիզը | $0 | Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ և ուղեգրի պահանջներ:<br>Նախօրոք լիազորում կամ ուղեգիր չի պահանջվում թագավարակի COVID-19 ստուգման առնչված ծառայությունների համար: |
| **Ձեզ անհրաժեշտ են լսողական/ աուդիտորական ծառայություններ** | Լսողության զննումներ | $0 | Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ: |
| **Ձեզ ատամնաբուժական ծառայություններ են հարկավոր** | Ատամնաբուժական զննում և կանխարգելիչ խնամք | $0 | L.A. Care Medicare Plus-ի անդամներն իրավունք ունեն ատամնաբուժական նպաստներ ստանալ Medi-Cal Dental-ից:<br>Ձեր ապահովագրությանը վերաբերող կամ ձեր տարածքում Medi-Cal ատամնաբույժ գտնելու հարցով զանգահարեք 1-800-322-6384 կամ TTY՝ 1-800-735-2922 կամ այցելեք www.denti-cal.ca.gov: |
| | Վերականգնողական և շտապ ատամնաբուժական խնամք | $0 | L.A. Care Medicare Plus-ի անդամներն իրավունք ունեն ատամնաբուժական նպաստներ ստանալ Medi-Cal Dental-ից:<br>Ձեր ապահովագրությանը վերաբերող կամ ձեր տարածքում Medi-Cal ատամնաբույժ գտնելու հարցով զանգահարեք 1-800-322-6384 կամ TTY՝ 1-800-735-2922 կամ այցելեք www.denti-cal.ca.gov: |

| Առողջապա-հական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություն-ններ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակար-արների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ ակնաբուժական խնամք է հարկավոր** | Աչքերի ստուգում | $0 | **Աչքի հիվանդությունների և վիճակի ախտորոշման և բուժման համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ տեսողության հետազոտություններ** ներառյալ գլաուկոմայի ամենամյա հետազոտություն ռիսկի ենթարկված մարդկանց համար: Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ և ուղեգրի պահանջներ:<br>Ամեն տարի **մինչև 1** լրացուցիչ աչքի **հետազոտություն :** |
| | Ակնոցներ կամ կոնտակտային ոսպնյակներ | $0 | Մեկ ակնոց (ապակի կամ շրջանակ) կամ կոնտակտային ոսպնյակներ՝ կատարակտի վիրահատությունից հետո:<br>Ակնոցների (ոսպնյակներ և շրջանակներ) կամ կոնտակտային ոսպնյակների մինչև $500 ծրագրային ապահովագրության սահման ամեն երկու տարին մեկ:<br>Կարող են կիրառվել նախօրոք լիազորման կանոններ: |
| | Այլ տեսողական խնամք | $0 | |
| **Ձեզ հոգեկան առողջության ծառայություններ են հարկավոր** | Հոգեկան առողջության ծառայություններ | $0 | Ապահովագրությունն ընգրկում է՝<br>• Անհատական թերապիա<br>• Խմբային թերապիա<br>• Ընտանեկան թերապիա<br>• Դեղերի կառավարում/հոգեկան վիճակի գնահատում<br>• Հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես ցուցադրված է՝ հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար<br>• Մասնակի հոսպիտալացման ծրագիր (PHP)<br>• Հոգեբուժական ստացիոնար խնամք |

| Առողջապա-հական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություն-ններ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակար-արների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
| | Հոգեկան առողջության ծառայությունների կարիք ունեցող մարդկանց ստացիոնար և ամբուլատոր խնամք և համայնքային ծառայություններ | $0 | Դուք մինչև 190 օր ստացիոնար հոգեբուժական հիվանդանոցային խնամք կարող եք ստանալ կյանքի ընթացքում: Ստացիոնար հոգեբուժական հիվանդանոցային ծառայությունները մտնում են 190-օրվա սահմանաչափի հաշվարկի մեջ միայն որոշակի պայմաններին համապատասխանելու դեպքում: Սահմանաչափը չի տարածվում ընդհանուր հիվանդանոցում տրամադրվող ստացիոնար հոգեբուժական ծառայությունների վրա:<br>Ծրագիրն ապահովագրում է 90 օրվա ստացիոնար հիվանդանոցային բուժում:<br>Ծրագիրն ապահովագրում է 60 լրացուցիչ օր կյանքի ընթացքում: $0 համավճար լրացուցիչ օրերի համար կյանքի ընթացքում:<br>Բացառություն են կազմում շտապ օգնության դեպքերը, երբ Ձեր բժիշկը պետք է տեղյակ պահի ծրագրին, որ Դուք հոսպիտալացվելու եք: |

| Առողջապահական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություններ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակարարների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ հարկավոր են թմրանյութի օգտագործման արդյունքում առաջացած խանգարման ծառայություններ** | Թմրանյութի օգտագործման արդյունքում առաջացած խանգարման ծառայություններ | $0 | Թմրանյութի չարաշահման ծառայություններն ընդգրկում են*՝<br>• Ստացիոնար թունազերծում<br>• Մասնակի հոսպիտալացման ծրագիր (PHP)<br>• Ամբուլատոր բուժման ծառայություններ<br>• Թմրադեղից ունեցած կախվածությունը կառավարելու ծառայություններ (հայտնի է նաև որպես թունազերծում)<br>• Ինտենսիվ ամբուլատոր բուժում<br>• Թմրամոլության (օփիոիդային) բուժման ծառայություններ<br>• Դեղամիջոցներով աջակցվող բուժում<br>• Բուժում բնակման վայրում<br>• Գործի կառավարում<br>• Բնակեցում վերականգնման ընթացքում<br>• Վերականգնման աջակից ծառայություններ (աջակցություն բուժումն ավարտելուց հետո)<br>Ծառայությունների համար կարող է կիրառվել նախօրոք լիազորում:<br>Որոշ ծառայություններ տրամադրվում են Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության, նյութերի չարաշահման կանխարգելման և վերահսկման վարչության կողմից: |

| Առողջապա-հական կարիք կամ հուզող հարցեր | Ծառայություն-ներ, որոնք կարող են Ձեզ պետք գալ | Ցանցում գործող մատակար-արների Ձեր ծախսերը | Սահմանափակումներ, բացառություններ և առավելությունների մասին տեղեկություններ (առավելությունների կանոններ) |
|---|---|---|---|
